

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է ֆ օ ն № 253.

ՄԵԼԿ

Հիմնադրող Գրիգոր Արծրունի

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է լ է ֆ օ ն № 253.

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԻՏԻՒՆ

Նախաձեռնութիւն չը կայ.—ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Ալեքսանդրոս-
ից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Նամակ Թիւրքալից. Արտաքին լուրեր.—
ԽԱՌԻ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Արհօ-
ւիզմը մատաղ սերնդի մէջ.

ՆԱԽԱԶԵՆՈՒԹԻՒՆ ԶԼ ԿԱՅ

Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ
ծաղկէր միտք հիմնել քաղաքում մի
ապաստանարան ընկած կանանց համար:
Աւելորդ է ասել, թէ որքան համակրելի էր
այդ միտքը: Արտասահմանում եւ Ռուսաս-
տանում ընչ չեն այդ տեսակ հիմնարկու-
թիւնները, որոնք նպատակն է օգնութեան
ձեռք մեկնել անբարոյականութեան տիրող
մէջ խրված թշուառ կանանց եւ աղետել
նրանց այդ սուկայի դրութիւնից: Մեզա-
նում էլ անբարոյականութիւնը անխի-
ղճէր է տանում: մեզանում էլ, ուրեմն,
վաղուց պէտք է զանվէին խնամատար
ձեռքեր այդ զոհերի գոնէ մի մասը վերջ-
նական կորստից փրկելու համար:

Եւ ահա քաղաքային ինքնավարութիւնը
կամենում է նախաձեռնութիւն յանձն առ-
նել այդ գործում: Բայց... Մեր բոլոր
հարցերը առանց այս տխուր բայցիչ չեն
մնում: Կանանց ապաստանարանի մասին
խօսք սկսողները, ծրագիր կազմողները յան-
կարծ յիշում են, որ թէ եւրօպայում եւ
թէ Ռուսաստանում այդպիսի հիմնարկու-
թիւններ պահողները բարեգործական ըն-
կերութիւններն են: Ուստի եւ մի կողմ են
թողնում ապաստանարանի գործը, մինչեւ
որ Թիֆլիսում կը կազմվի մի ընկերու-
թիւն յատկապէս այդ բարեգործութիւնը
զուրկ բերելու համար:

Սա մի շատ բնորոշ հանգամանք է: Ժա-
մանակակից սերունդը գիտէ մտածել շատ
բարի ու օգտակար գործերի մասին, գիտէ
ծրագրեր կազմել, իսկ գործադրել—ահա
ինչն է, որ նրան չէ աջակցում: Հէնց այդ
է պատճառը, որ մենք ամեն օր կարգում
ենք լրագիրներում բարեգործութեան բարի գի-
տաւորութիւններին մասին, ամեն օր լսում
ենք, թէ այս ինչ տեղում այս ինչ գործն
են ուղւում առաջացնել, այս ինչ մտադրու-
թիւնն են ծրագրում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Պարիզում յունվարից սկսեց հրատարակվել
մի նոր ամսագիր, այս անգամ զուտ մասնա-
գրական: Ամսագիրը կոչվում է «Գուլիան».

արդէն արեւած էին եղել, երկրորդ պատրաստակա-
նի 21 աշակերտներից 10 օղի էին խմելու եղել,
եւ սրանցից 5-ը արեւած էին եղած, իսկ փոքր
պատրաստակաւնի մէջ 27 աշակերտներից 19 օղի
էին խմում, 14 արեւած են եղած եւ միայն 8-ը
ոչինչ չէին խմում: Աղջիկների մի զարգում
եղած բոլոր 30-ը արդէն արաղ էին խմում,
իսկ նրանցից 17-ը (երեքը բարձր, իսկ 14-ը
փոքր պատրաստակաւնի) արեւած են եղած:

Այդ թւերը անհաստատելի կերեւային մեզ,
եթէ գիտականների տուածը չը լինէին:
Այս խեղճ մանուկների թունաւորման պատ-
ճառը իրանք ծնողներն են լինում, որովհետեւ երե-
խաներին իրանց կողքին են նստեցնում ճաշի
թամանակ ու գինի-արաղ խմեցնում, երբեմն
իբր թէ նրանց կազդուրելու համար, երբեմն
էլ (որ ուղղակի զարեւի է) երեխային արեւց-
նելու համար, որպէս զի յիմարութիւններ անէ
ու իրանց զուարճացնէ: Առաջին դէպքում ծը-
նողները մեղաւոր են անպատկառարար, կամե-
նալով բարձր անել նրան, իսկ երկրորդում
նրանք ուղղակի յանցանք են գործում:

Այն կարծիքը, թէ ոգիւրդ խմելու կազդու-
րում է երեխայի օրգանիզմը, մի սխալ կարծիք
էր, որը այսօր միանգամայն հերքվում է: Ալ-
կօօլը կամ սպիրտը (բոլոր ոգիւրդ խմելուների
զխաւոր մասը) մի թոյն է, որը ոչ մի կեր-
պով չէ կարող օգտակար լինել առողջ մար-
դուն, մանաւանդ երեխային: Նա մի թոյն է,
եւ երեխայի զեռակազմ, վերին աստիճանի
նուրբ կազմութեւնը զարմանալի հեղուկութեւնը

խմողներն է պ. Գարեգին Մեծատուրեան: Ա-
ռաջին համարը բաղկացած է 16 փոքրագիր
երեւանից եւ ունի զիւղատեսակական բովան-
դակութիւն: Վերջին տարիներս արտասահմա-
նում այնպիսի արագութեամբ բուսում եւ
անյայտանում են զանազան հայերէն պարբե-
րական հրատարակութիւններ, որ պ. Մեծա-
տուրեան իր ամսագիրը սկսում է այսպիսի
պարբերութեամբ:

Թող չպտռնի թէ «հանդէս մ'ալ բուսաւ»...
«Գուլիան» նպատակ չունի ուրիշին վաճառ-
կած զամիսները խելու, ոչ ալ մէկի միւսի
ձեռքի հացէն պատառ մը ճանկելու... Հա-
մատ իտէպի մը մարմնացումն է այս հրա-
տարակութիւնը, որ երկար տարիներու ըն-
թացքում մտածուած ու ծրագրուած է:

Թող այդպէս էլ լինի: Մենք այժմանից
ոչ գուլակութիւններ ենք ուղւում անել, ոչ
կարող ենք ասել, թէ ինչ կանէ պ. Մեծատու-
րեան իր հանդէսը հետաքրքրական, օգտակար
դարձնելու, ուրեմն եւ ժողովրդականացնելու
համար: Եթէ չենք սխալվում, սա առաջին գի-
ղատեսակական ամսագիրն է հայերէն լիցուով:
Հայ գիւղատնտեսը, հրատարակելով ամսագիրը,
Մենք է, ուրեմն, սպասել ի նկատի ունենալ մաս-
նագէտներին. նա պիտի գործ ունենայ անմի-
ջապէս ժողովրդի հետ: Մենք մի օրպէս չենք
կասկածում, որ գիւղատնտեսական հրատարա-
կութիւնը կարող է մեր երկրագործ ժողովրդի
համար մի լաւ ընկեր եւ զեկակար դառնալ:
Մենք է, ուրեմն, սպասել ի նկատի, թէ «Գու-
լիան» որքան կարող կը լինի այդ դերը կա-
տարել: Առ այժմ բերենք խմբագրական խոս-
տուանքից մի քանիք:

«Գուլիան»-ի նպատակն է արթնցնել եւ
տարածել մեր ժողովրդին մէջ հողագործու-
թեան եւ արուեստներու ճաշակը, ըլլալ գործ-
նականի ժողովրդային դպրոց մը, մասնա-
նիչ ընել մշակութեանց լաւագոյն եղանակը,
գիտական նորութիւնները եւ արուեստնե-
րու հակա յառաջադիմութիւնը:

«Գուլիան»-ը պիտի աշխատի համախմբել
իր շուրջը գրուած մասնագիտական ոյժերը
մշակելու եւ զարգացնելու համար, իր ուժե-
րուն ներածին չափով, մեր հողագործական
ու արուեստական դրականութիւնը:

«Գուլիան»-ը անարգում գիւղացիին ու
արհամարհում արհեստագործին (էսմաֆ) ար-
ժանիքը երեւան պիտի հանէ, ընկերութեան
մէջ իրանց արժանի տեղը պիտի տայ, ցոյց
տալով այս ժրաշան ու աշխատաւոր դասա-
կարգի հողին, արուեստները ու իրենց նա-
նեկներուն մատուցած ծառայութիւնը եւ մեր
ժողովրդի անուան բերած պատիւը:

Ենթարկվում է նրա կործանիչ աղեղնու-
թեանը:
Այս աղեղնութիւնը լաւ ըմբռնելու համար
թւենք այն վիճակները, որ հասցնում է ալկո-
հոլը հասակաւորի կազմութեանը: Ալկօհոլային
թունաւորումն, որը կոչվում է ալկօհոլիզմ
(իսկ այս արտաբանութեամբ չէ կոչվում—ալկօհոլի-
զմ) հետեւեալ նշաններով է արտայայտվում *).

1) Հոգեկան բարձր յատկութիւնները նուա-
զում են, ճնշվում, կամքի ոյժը թուլանում է,
ինքնագոյութեան անհետանում է եւ մարդ գե-
րի է դառնում թէ իր սեփական կրքերին եւ
թէ չըջապատող հանգամանքների աղեղնու-
թիւններին:

2) Մտաւոր ոյժը թուլանում է, ընդունա-
կութիւնները ըմբռնում են, բարոյական սկզբ-
բունքները թուլանում են կամ կորչում:

3) Հասցնում է մարգուէն ընդհանուր ներ-
վայնութեան (դարձնելով նեկրոստենի), պատ-
ճառ է դառնում ուղեղի ու օդնայարի հիւան-
դութիւնների եւ տանում է դէպի խելագա-
րութիւն:

4) Դարձնում է անբարոյական, յանցաւոր
(զոգ, մարդասպան), ծով եւ անբան:

5) Երբեք կամ գործարանները հիւանդա-
նութիւններին:

Առանց պապուն բառերու եւ հոյակապ
զարձուածներու, չոր ու ցամաք, բայց ճիշդ
եւ յստակ լիցուով «Գուլիան» իր բոլոր ճիշդ
ի գործ պիտի դնէ սիրել տալ մեր նոր սե-
րնդին հոյակային զբաղումներն ու արուեստ-
ները՝ ցրուելով մատաղ սաղարթը դէպի այս
վերջինները ունեցած նախապաշարութիւնը,
զգուանքն ու առեւելութիւնը:

«Գուլիան»-ը ընդհանրապէս մատչելի հար-
ցեր եւ իրագործելի այնպիսի խնդիրներ պի-
տի ներկայացնէ ժողովրդին, որոնց գործա-
գրութեանը համար առայժմ մեծամեծ դրա-
մագուլիներ պէտք չըլլան:

Հին դրութիւնները քանդելու եւ կործա-
նելու նպատակով չէ որ պիտի հրատարակուի
այս հանդէսը, այլ զանոնք բարեփոխելու: Եւ-
րոպական քաղաքակրթ. աղբերու արուեստ-
ներու եւ հողագործութեան մէջ անպիսի եւ
անսահման զոհաբերութեամբ ձեռք բերած
ամենէն արդիւնաւոր նորութիւններէն եւ
հանձարեղ հեղինակներէն օգտուելով կրնանք
մեր հողագործութիւնը ու արհեստները
ձեւաւորել մեր օգտին եւ մեր երկրի ծաղկե-
լուն, որով տիեզերական մեծ հարցի հայր
լինողին՝ լուծման ալ նպաստած կ'ըլլանք:

Անհերքելի է որ քաղաքական եւ գրական
օրաթերթերու, զեղարուեստական, բանաս-
տեղական, բանասիրական, կրօնական, ա-
ռողջապահական եւ նորաձեւութեան հան-
դէսներու հետ «Գուլիան»-ն ալ դուրսից
ունենալու իրաւունք ունի, սա սահմանուած
չէ միայն որոշ գաղափարի մը օգտին կամ
հետաքրքրութեանը, այլ մեծամասնութեան
մը շահերուն, մշակին ու գործատւին, ար-
հեստագործին ու հողագործին, քաղաքացիին
ու գիւղացիին, որոնք իրարու ջով զալով
կազմած են մեր ժողովուրդը:

Կը հաւատանք որ «Գուլիան»-ը ընդունե-
լութիւն եւ համակրութիւն գտնէ մեր ժողո-
ւրդի բոլոր խաւերէն. քանի որ անոր սի-
րած հողով, փայլալաւ եղով, օգտակար
արուեստներով, կենսովը եւ ամեն օրուայ
հացի խնդրով պիտի զբաղի:

Խմբագրութեան ցանկութիւնները այնքան
գեղեցիկ են, որ մենք չենք կարող չը ցոյցալ
նրան կատարակալ աշխուրհիւ:

ՆԱԽԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՏ

Փետրվարի 10-ին

Ամսիս 8-ին կայացաւ տեղական սերողներ
երրորդ ներկայացումը ի նպատակ տեղիս իշա-
կան պրօպագանդայի չեւաւոր աշակերտներին
ընդդէմ: Ոչ մի անգամ պիտի ընտրութիւնը
այնքան ժամանակ չէր խել. ինչպէս այս ան-
գամ խումբը երկար ժամանակ վէճի եւ քն-
նում են, անուրջ վատ է կատարվում ու
մարդը նիհարում է:

6) Արիւնը փչանում է, նրա գլխաւոր սննդ-
դարար յատկութիւնները նուազում են, նոյն-
պէս եւ կնոջ կաթը, որը եւ անպէտք է դառ-
նում երեխային կերակրելու համար:

7) Առաջացնում է սրտի ու երակների յա-
րատու եւ անբուժելի հիւանդութիւններ, ո-
րոնք վերջանում են մահով:

8) Մարմինը սառնում է եւ անկարող է լի-
նում գիմարելի ցրտին:

9) Հիւանդանում են բոլոր ներքին գործա-
րանները (կարդը, երկամուկները, թոքերը,
սեռային ու միզային գործարանները):

10) Պակեցնում է մարմնի զիւրկոտու-
թիւնը եւ անկարող է դարձնում նրան կուրու-
հիւանդութիւնների դէմ: Այս պատճառով ար-
բեւոյները աւելի յաճախ եւ աւելի հեղա են
հիւանդանում, հիւանդութիւնը սաստիկ բարդ-
վում է նրանց վրա ու յաճախ սպանում է
նրանց:

11) Տրամադրում է դէպի բարակացաւ, ու
թոքերի բորբոքումն, ուռուցեւորութիւն եւ
այլն:

12) Ալկօհոլիզմը տալիս է վատասելիւթ սե-
րունք, որի մէջ լինում են մեծ քանակու-
թեամբ յանցաւորներ, անբարոյական կանայք,
ապուշներ, ընկաւորներ, ծոյրեր, ինքնա-
սպաններ:

Եթէ այսպիսի մեծ է ալկօհոլի աղեղնութիւնը
հասակաւորի վրա, ապա որչափ ահադին ու

* Այս յօդուածը գրելու օգտին եւ ի միջի ալոց եւ
կոմս Սկալիմսկու զեկուցումից, որ նա արեւ տն-
ցեալ տարի Պետերբուրգի հակաալկօհոլական մասնա-
ժողովում:

